



Հասցեատու՝ ԷՍ

Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ
հիմնադրամի տնօրեն Էդիտա Գրիգորյան

ԿԱՐԾԻՔ

Է.00.04 «Ազգագրություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների
թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Խորեն Հենրիկի
Գրիգորյանի «Լիբանանի Այնճար բնակավայրի հայ բնակչության ինքնության
փոխակերպումները» ատենախոսության մասին

Խորեն Գրիգորյանը «Լիբանանի Այնճար բնակավայրի հայ
բնակչության ինքնության փոխակերպումները» ատենախոսությունում անդ-
րադարձել է «մուսալեոցի» և «ավեդիացի» ինքնանվանումների, մուսալեոցի-
ների ինքնության ու «ծագման» հատումների զարգացումներին, Մուսալեոն
ինքնապաշտպանական մարտերին ու դրանց առասպելացման գործընթա-
ցին, մուսալեոցի-այնճարցի հասկացությունների սերտաճման տարաբնույթ
դրսևորումներին: Նման հարցադրումներով ու առաջարկվող վերլուծություն-
ներով ու պարզաբանումներով ատենախոսությունը շահեկանորեն առանձ-
նանում է հայոց ներթնիկ գործընթացներին նվիրված աշխատանքների մեջ:

Ատենախոսության ներածության մեջ հեղինակը միանգամից անցնում
է հարցադրման էության տեսական ընդհանրացումներին (Բրուքեթեր, Աս-
սման և այլոք) և խնդրի դիտարկումը կոնկրետացնում Թուրքիայի օրինակով:
Հայկական ինքնության դրսևորումների մասին խոսելիս առանձնացվում է
կառուցվող ինքնության խնդիրը, լայն առումով որի համապարփակ դի-
տարկմանն էլ՝ Լիբանանի Այնճար գյուղի հայ բնակչության պատմական և
ընթացիկ լոկալ զարգացումների, փոխակերպումների և դրանց եզրութաբա-
նական ձևակերպումների վերլուծության օրինակով՝ նվիրված է ողջ աշխա-
տանքը: Ներածությունում էլ հենց արվում է գլխավոր հարցադրումն ու առա-

ջարկվում է գիտական խնդիրը. թե ինչպես է ծագել ու զարգացել «մուսալեոցիներ» եզրը, որը «արտածված լինելով Մուսա լեռան աշխարհագրական անունից, ակնհայտորեն ոչ թե աշխարհագրական ծագման վայրի տեղանվան ժառանգումն է, այլ Հայոց ցեղասպանության ժամանակ այդ վայրում ծավալված ինքնապաշտպանական հայտնի իրողությունների, որը հետագայում ձևակերպվել է «Մուսա լեռան հերոսամարտ» անունով» (էջ 9):

Ներածությունում պահպանված է ատենախոսական աշխատանքների բնութագրական մյուս պահանջների կատարումը նույնպես. ի մասնավորի, առանձնացվում են նպատակն ու խնդիրները, մեթոդաբանությունն ու տեսական հիմքը, գրականության տեսությունը, կառուցվածքն ու բովանդակությունը: Կարևորում ենք հատկապես ատենախոսի իրականացրած բազմաթիվ հարցազրույցները և դիտարկումները բուն Այնճարում, ինչպես նաև Վազրֆ գյուղում:

Առաջին գլխի շրջանակներում հանգամանալիորեն ներկայացվում են «սվեղացի» և «մուսալեոցի» անվանման և փոխակերպումների ընթացքի պատմությունը, մասնավորապես, «ե՞րբ և ի՞նչ հանգամանքներում են «ծնվել» այս հավաքական անունները, ծագումով ինքնանուննե՞ր, թե՞ արտանուններ են դրանք, և ի՞նչ են բնութագրում՝ հարաբերականորեն ինքնուրույն ինքնությունն, խմբի մասնիկ, թե՞ պարզապես տեղանքի հետ մասնավորեցում» (էջ 25): Մրանք բարդ հարցեր են, պահանջում են խնդրի համապարփակ դիտարկում, ինչն էլ իրականացված է ատենախոսի կողմից սկզբնաղբյուրների վերլուծության շնորհիվ: Ատենախոսի եզրակացությունների մեջ նկատվում է, որ ««մուսալեոցիներ» եզրն ավելի ուշ է դարձել ողջ [սվեղիահայ] բնակչության հավաքական անուն, ներառելով նաև տեղահանված և այդ [ինքնապաշտպանական] մարտերին չմասնակցած բիթիասցիներին» (էջ 28): Ուշագրավ է այս գլխում «քիսթինըկի» (քրիստոնեներեն) լեզվին անդրադարձը:

Առաջին գլխի էջերում է առաջ քաշվում Մուսա լեռ/Սվեղիայի «մուսալեոցիացման» կարևոր և գլխավոր ուղենիշի գործառույթներն ակամա ստանձնած Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» վեպի գործոնը: Ատենախոսը,

մուսալեոցիների մասին խոսելիս, օգտագործում է «արժանապատիվ հայ» եզրույթը, որը որոշակի աղերսներ ունի Հարություն Մարությանի առաջ քաշած «արժանապատիվ հիշողություն» եզրի հետ:

Հետաքրքիր է ստենախոսի ներկայացրած մուսալեոցիների սյունիք-արցախյան, կիլիկյան ծագման առասպել-պատումները, որոնք շարադրված են սկրնադրյունների և գրականության հանգամանակի, գիտական բարեխղճության տարրերով վերլուծության արդյունքում:

Ատենախոսության երկրորդ գլուխը, որը վերնագրված է «Մուսա լեռան ինքնապաշտպանական մարտեր: Պատմական դեպքեր և առասպելացում» հենված է այդ մարտերին նվիրված աղբյուրների, այդ թվում նաև «կուսակցականացված» գրականության վերլուծության վրա: Ատենախոսը նաև հաջողությամբ ցույց է տալիս, թե ինչպես են գրական աշխատանքներն ազդել «մուսալեոցի» ինքնության առաջացման և զարգացման ընթացքի վրա: Մեծ ուշադրություն է հատկացված Վերֆելի վեպի ազդեցության վերլուծությանը. նկատենք, որ վեպը արևմտահայերեն է թարգմանվել ու լույս ընծայվել դեռևս 1935 թ., արևելահայ թարգմանությունը տեղ է գտել 1964 թ.: Ի մասնավորի, հանգամանորեն դիտարկվում և վերլուծվում են վեպի գլխավոր հերոս Գարրիել Բագրատյանի կերպարի նախատիպերը, նաև առաջին անդրադարձերը վեպին հայ և օտար քննադատների (Մանասե Մեւակ, Ասատուր Փաշայան, Ավետիք Իսահակյան, Յաիր Աուրոն) կողմից: Դրանց շարքում է եղել նաև Լևոն-Կարապետ Պալճեանը՝ հետագայում Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը, որը դեռևս 1940 թ. գրքույկ է հրատարակել վեպի մասին:

Հետաքրքիր է համապատասխան սկզբնաղբյուրով հաստատվող ստենախոսի նկատառումը, որ դեռևս «1909 թ. տեղի [Մուսա լեռան] բնակչությունը Միջերկրական ծովից հասնող անգլիական և ֆրանսիական նավատորմի օգնությամբ փրկվելու փորձն ուներ: ... և մեծ է հավանականությունը, որ լեռ բարձրանալու որոշումը կապված լիներ նաև ծովից օգնության հետ՝ որպես ջարդից խույս տալու փորձված ու հաջողված միջոց» (էջ 85):

Առանձին քննության է ենթարկված Մուսա լեռ չբարձրացող և ապա վերապատվելի Նոխուսյանի գլխավորությամբ տարագրվող 60 ընտանիքանոց խմբի դեպքը: Օբյեկտիվ վերլուծություն է առաջարկվում ինքնապաշտպանական մարտերի ղեկավարման հարցի շուրջ, ցույց է տրվում ոչ միայն կուսակցական, այլ նաև խորհրդահայ պատմագիտության կողմնակալ վերաբերմունքն այս հարցում:

Երրորդ գլուխը մեծապես հենված է 2015-2018 թթ. հեղինակի իրականացրած դաշտային աշխատանքների արդյունքում հավաքված նյութի ներկայացման և վերլուծության վրա: Զգալի դեր է հատկացված Այնճարում մեծ կշիռ ունեցող ՀՅԴ «Կարմիր լեռ» կոմիտեի գործունեությանը: Այս ամենը ներկայացված է Ալեքսանդրեթի սանջակի պատմության և լիբանանյան խճանկարի հանգամանալի վերլուծության հետնախորքին: Մեծ հետաքրքրությամբ են ընթերցվում առասպել-պատումների վերլուծությունները:

Հարկ է նշել, որ հեղինակին հիմնականում հաջողվել է լուծել իր առջև դրված խնդիրները: Ատենախոսության բոլոր գլուխներում տեղ գտած նյութն ատենախոսը հողվածների տեսքով հրատարակել է գիտական պարբերականներում:

Խորեն Գրիգորյանի ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է հետազոտական աշխատանքի բովանդակությանը և նրա հիմնադրույթների համարժեք արտացոլումն է:

Միևնույն ժամանակ, ատենախոսությունը գերծ չէ նաև թերություններից և բացթողումներից, որոնցից մի քանիսի վրա կցանկանայինք հրավիրել ատենախոսի ուշադրությունը:

1. Ատենախոսը չի օգտագործել առաջնային աղբյուրի դերին հավակնող ֆրանսիական նավատորմի սպա, թարգմանիչ Շառլ-Տիրան Թեքեյանի «Քառամյա պատերազմն Արևելքում. ֆրանս-հայկական գործընկերությունը

պատերազմի ընթացքում (հուշագրության էջեր, Մուսա լեռան հայերի փրկագործությունը ֆրանսական նավատորմիղով, Հայկական լեզեռներ)» երկլեզու հայերեն-ֆրանսերեն գիրքը (առաջին հրատարակությունը լույս է տեսել 1919 թ.), ի մասնավորի՝ ւրա նոր թարգմանությունը և երկլեզու հրատարակությունը՝ Կարեն Արիստակեայանի աշխատասիրությամբ, նրա շահեկան ծանոթագրություններով և մեկնաբանություններով:

2. Վահրամ Շեմմասյանն (Vahram L. Shemmassian) ունի երկու ստվարածավալ աշխատանքներ, նվիրված Մուսա լեռան հայերին: Առաջինը վերնագրված է «The Musa Dagh Armenians: A Socioeconomic and Cultural History, 1919-1939» (Beirut: Haigazian University Press, 2015, 376 p.), երկրորդի վերնագիրն է. «The Armenians of Musa Dagh. From Obscurity to Genocide Resistance and Fame 1840-1915» (The Press at California State University, Fresno, 2020, 555 p.): Այս աշխատությունները նույնպես արտացոլված չեն ատենախոսության մեջ:

3. Ատենախոսության երրորդ գլխում խիստ ծավալուն մեջբերումներ են արված ատենախոսի անցկացրած հարցազրույցներից՝ մեկ, մեկուկես, անգամ երկու էջ ծավալներով: Կարծում ենք, որ շատ ավելի հարմար կլիներ դրանց ի մի բերելը ատենախոսության հավելվածում:

4. Հետաքրքիր կլիներ դիտարկել, թե ինչու «մուսալեռցիացում» երևույթը տեղ չգտավ Խորհրդային Հայաստան տեղափոխված մուսալեռցիների շրջանում: Եվ ընդհանրապես, ինքնության ինչպիսի՞ զարգացումներ տեղ գտան այդ խմբի ներսում:

5. Աշխատանքը լրացուցիչ սրբագրման կարիք ունի:


Կարծում ենք, որ այս և նման լրացումներն ու շտկումները կարելի է իրականացնել հեղինակի կողմից ատենախոսությունը որպես մենագրություն հրատարակման պատրաստելու ժամանակ:


Ամփոփելով նշենք, որ Խորեն Գրիգորյանի թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է գիտության թեկնածուի աստիճան

հայցելու ատենախոսություններին առաջադրվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Է.00.04 «Ազգագրություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:


Կարծիքը հաստատվել է «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի Հայոց ցեղասպանության աղբյուրագիտական ուսումնասիրությունների և Արցախի, Նախիջևանի և Ադրբեջանի հայության բռնաճնշումների ուսումնասիրության բաժինների համատեղ (7 փետրվարի, 2025 թ.) նիստում:

Քննարկմանը մասնակցել են բաժնի վարիչ, գիտական քարտուղար, պ. գ. թ. Նարինե Մարգարյանը, բաժնի աշխատակիցներ, պ. գ. թ., ավագ գիտաշխատող Ռոբերտ Թաթոյանը, կրտսեր գիտաշխատող, ասպիրանտ Աննա Կազարյանը, բաժնի վարիչ, պ. գ. դ. Հարություն Մարությանը, բաժնի աշխատակից, պ. գ. թ., գիտաշխատող Գայանե Հովհաննիսյանը:

Հայոց ցեղասպանության աղբյուրագիտական ուսումնասիրությունների բաժնի վարիչ, գիտական քարտուղար, պ. գ. թ.  Ն. Մարգարյան

Արցախի, Նախիջևանի և Ադրբեջանի հայության բռնաճնշումների ուսումնասիրության բաժնի վարիչ, պ. գ. դ.  Հ. Մարության



Մարգարյանը հաստատում է՝
Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի
գիտական քարտուղար, պ. գ. թ.  Ն. Մարգարյան

08.02.2025 թ.